ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2024 թվականի N 167 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 2146-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Բնակելի տարածքներ նվիրելու մասին» N 2146-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետից հանել «, իսկ քաղաքացիները Հայաստանի Հանրապետության հանդեպ հետագայում սույն որոշման հիման վրա բնակելի նշանակության գույքի ձեռքբերման վերաբերյալ գույքային պահանջ չեն ներկայացնելու» բառերը.

2) որոշման 4-րդ կետում՝

ա. «պարտավորվում են նվիրել» բառերը փոխարինել «նվիրում են» բառերով,

բ. «, ընդ որում, հավելվածներով նախատեսված նոր բնակարանների նվիրատվության և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան

համայնքին քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակարանների նվիրատվության պայմանագրերը կնքվում են միաժամանակ» բառերը հանել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ